Այն գեղեցիկ օթոցները, որ տարածեցին, իրաւ, շատ մեղք կը լինէր՝ նրանց վրայ ճանապարհի փոշեպատ կօշիկներով նստել, բացի դրանից, այդ մի անքաղաքավարութիւն էր, որ տեղացիների աչքում շատ խորթ պիտի երեւար:

Այնտեղ գտնուած երիտասարդները, որ դրացիներ էին եւ բոլորովին ուրիշ գործով էին եկած ռեսի մօտ, որպէս իրանց տան գործը համարելով, սկսեցին մեր ձիաների խուրջինները եւ թամքերը ցած բերել եւ տարան հանգստացնելու նրանց: Շուտով հաւաքուեցաւ մեր շուրջը մի հարցասէր բազմութիւն, ամէն սեռի եւ ամէն հասակի, որոնք հեռուից հետաքրքրութեամբ նայում էին մեզ վրայ, մատով ցոյց էին տալիս միմեանց եւ զանազան սրամիտ նկատողութիւններ էին անում իրանց բարբառով:

— Այդ մարդու քոլոզը սունկի նման չէ՞, Մկոյ, — հարցնում էր մի տղայ, ցոյց տալով Ասլանի եւրոպական լայնեզր գլխարկը:

— Ուղիղ սունկի նման է, — պատասխանում էր Մկոն, որպէս իր չարաճճիկ ընկերների մէջ մի մեծ հեղինակութիւն: — Բայց դու շալոարին նայի՛ր, կասես փայտի վրայ հագցրած կեղեւ լինի:

Կտուրը, որի վրայ նստած էինք մենք, իր բարձրութեամբ հազիւ որոշւում էր գետնի մակերեւոյթից, որովհետեւ տունը գետնափոր էր եւ մտել էր լեռան կողքի մէջ, որը զառիվայր դիրք ունէր: Գիւղի բոլոր տները այդ դիրքով էին շինուած. մէկի կտուրը միւսի բակն էր կազմում, եւ այսպէս աստիճանաբար իջնում էին ցած, մինչեւ ձորի խորքը: Եթէ ներքեւից մարդ նայելու լինէր դէպի լեռան զառիվերը, կը տեսնէր, որ տները, միմեանց վրայ շարուած լինելով, ներկայացնում են մի մեծ սանդուղք, որ նոյնպէս աստիճանաբար բարձրանում է մինչեւ սարի կատարը: Ինձ շատ անգամ էր պատահել տեսնել, որ լեռնածին երկրներում համարեա բոլոր գիւղերի համար ընտրել էին այսպիսի անյարմար եւ անմատչելի տեղեր: Երեւի, մշտական երկիւղը ստիպել էր խոյս տալ հարթ դաշտերից եւ հովիտներից: Ի՜նչ հիանալի գիւղի տեղ կարող էր լինել այն ծովեզրեայ գեղեցիկ մարգադաշտը, որ երեւում էր մեր առջեւ: Երբ այդ մասին նկատեցին ռեսին, նա պատասխանեց.

— Մեր ծովը գժութիւններ շատ ունի. նա սովորել է լափել, կլանել իր եզերքի մօտ գտնուած բնակութիւնները: — Յետոյ նա պատմեց հէնց իր հասակում պատահած անցքերը, ոյ ծովը բարձրանալով, որքան դիւզեր, անդաստաններ ծածկել էր ջրի տակ: — Իսկ հին ժամանակներում, — աւելացրեց նա, — ամբողջ քաղաքներ, բերդեր ու վանքեր են ջրասոյզ եղել: